

ՆԵՐՖԻՆ ԴՐՂԱՊԱՏՃԱՌԸ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ⁵²

Գայանե Գևորգյան

Բանալի բառեր: դրդապատճառ, գործոն, միջնշակութային հաղորդակցություն, հարացուց, ինքնավստահություն, տեսություն, վերահսկողություն, սանդղակ, մարտահրավեր, համագործակցություն:

Դրդապատճառը շատ կարևոր գործոն է օտար լեզու սովորելիս [1]: Որպես դրդապատճառ կարող են հանդես գալ անհատի մղումները, տեսակետները, համոզումներն ու դիրքորոշումները, աշխարհայացքային տարրերը, որպես նպատակ՝ ընտրված արտաքին առարկաներն ու իրադրությունները:

Եեր ավելին՝ դրդապատճառը կարող է սահմանվել որպես էներգիայի ուղղվածություն, համառություն և հավասարություն, ակտիվություն և նպատակադրվածություն [2]: Օտար լեզվի ուսումնասիրնամ բնագավառում դրդապատճառը համարում են այն հիմնական գործոններից մեկը, որ կանխորոշում է ձեռքբերումներ և հաջողություններ: Ակգրնապես այն ժառայում է որպես ուսման ցանկություն առաջացնելու խթան և այնուհետև՝ որպես պահպանող ուժ՝ տրված լեզուն յուրացնելու քրտնաշան գործընթացում [3]: Ներքին դրդապատճառ եղրույթը ներխուժել և սահմանվել է Ռ. Ք. Գարդներին վ. Է. Լամբերտի կողմից: Դրանից հետո կատարվել են մի շարք ուսումնասիրություններ՝ օտար լեզու սովորելու մեջ դրդապատճառի դերը բացահայտելու համար [4]: Այսպես՝ օտար լեզուն ընկալվում էր որպես միջնորդ տարրեր էթնոլեզվական համայնքների միջև, և, որպես այդպիսին, համարվում էր, որ տվյալ համայնքի (հանրության) լեզուն ընկալելու դրդապատճառը էական էեր է խաղում միջնշակութային հաղորդակցությունը զարգացնելու կամ նրան խոչընդոտելու մեջ:

Տվյալ հոդվածում փորձ է կատարվում ներկայացնել ներքին դրդապատճառ հասկացությունը և տալ նրա առավել շատ կիրառելի սահմանումները:

Հոդվածի նպատակն է վերլուծել ներքին դրդապատճառի ազդեցությունը լեզվի ընկալման արագության և որակի վրա, ինչպես նաև քննարկել այն հնարավոր ուղիներն ու միջոցները, որ կարող են կիրառվել ներքին դրդապատճառներ առաջացնելու համար:

1990-ականներին նկատելիորեն փոխվեց դրդապատճառի՝ որպես էական գործունի ընկալումը օտար լեզու սովորելու գործընթացը ուսումնասիրող լեզվաբանների մոտ, և սա արտահայտվեց մի շարք ուսումնասիրություններում, որտեղ ներկայացվում էր ավելի “կրթակենտրոն” մոտեցում: Վերջինս ավելի շատ էր համադրվում «հիմնական» կրթական հոգեբանական ուսումնասիրության հետ [5] [6]: Այս նոր հարացուցը ընդունեց օտար լեզու սովորելու դրդապատճառի ուսումնասիրությունը: Այն (1) զարգացրեց դրդապատճառի ճանաչողական այն կողմերը, որոնք վերաբերում են սովորողի եւ-ին (սովորելու անհրաժեշտություն, ինքնավստահություն, ինքնորոշում), (2) ամբողջացրեց ընդհանուր հոգեբանության մեջ արդեն տարածված տարրեր ազդեցիկ տեսություններ (օր. Նպատակի և վերագրման տեսությունները) և (3) ավելի շատ կենսորնացավ դասասենյակում կիրառելի իրավիճակային գործուների վրա (օր. լեզ-

⁵² Հոդվածն ընդունվել է 08.11.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ օտար լեզուների ամբիոնը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՍՏՈՑ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Վի դասընթացը և օտար լեզու դասավանդող ուսուցիչն բնորոշ առանձնահատկությունները [7]:

Այսպես համաձայն այս հարացույցի՝ դրդապատճառը առաջանում է սովորելու և առաջադրանքները կատարելու նկատմամբ ներքին հետաքրքրասիրությունից՝ առանց արտաքին միջամտության և վերահսկողության: Այս հարացույցի սահմաններում օտար լեզու սովորողի սեփական են-ի և կարողությունների գնահատումը շատ էական է: Նրա մոտ ներքին դրդապատճառ առաջացնելու և այն խորացնելու օգտակար միջոցներ կարելի է համարել:

- ինքնուրույն աշխատանքը

- ազատ (բաց) ծրագիրը: Նա կարող է փոփոխություններ մտցնել ծրագրի մեջ ըստ իր նախասիրությունների (ուսուցիչ համաձայնությամբ)

- նրա ինքնազնահատականի և ընդունակությունների քաջալերումը

- ինքնավերահսկման և ինքնակառավարման հնարավորությունների խրախուսումը:

Դրդապատճառը օտար լեզու ձեռք բերելու հիմնական գրավականներից մեկն է: Վերջին երեսուն տարիների ընթացքում կատարվել են նշանակալի քանակությամբ ուսումնասիրություններ՝ օտար լեզու սովորելու պրոցեսում դրդապատճառի դերը և բնույթը բացահայտելու համար:

Այսպես հիմք է դրվել դրդապատճառի ուսումնասիրությանը և ներկայացվել են լեզվի ծեռքբերման չափորոշիչ տեխնիկաները և միջոցները [8],[9]:

Երկրորդ լեզվի դրդապատճառին վերաբերող առկա վաղ ուսումնասիրություններում առաջ է քաշվել այն հիմնավորումը, որ անձի օտար լեզու սովորելու դրդապատճառը բխում է թե՛ օտար լեզվով խոսող հանրությունից, թե՛ նպատակներից, որին ձգնում է հասնել անհատը օտար լեզուն սովորելիս [10]: Այսուհանդեռ առանձնացվում են դրդապատճառի 2 տեսակ: Առաջինը ինտեգրատիվ դրդապատճառն է: Նման դրդապատճառը ստիպում է սովորել օտար լեզու՝ տվյալ լեզվով խոսող հանրության անդամների հետ շփվելու համար: Երկրորդը կիրառական դրդապատճառն է, որը դրդում է սովորել օտար լեզուն մի որևէ գործնական նպատակի հասնելու համար, ինչպես օրինակ առաջընթացը աշխատանքում, կամ բարձր գնահատականը՝ դասընթացներում [11]:

Սերժին դրդապատճառի տեսակների առանձնացմանը հետևեց ինքնորոշման տեսության (Self-determination Theory) ներմուծումը Ռ. Ս. Ռայնի և Է. Լ. Շեքի կողմից: Նրանք այն սահմանել են որպես մարդկային դրդապատճառի և անձնավորության նկատմամբ մի մոտեցում, որը անհատի զարգացման և վարքային ինքնակառավարման համար կիրառում է ավանդական էմպիրիկ մեթոդներ [12]: Այս մոտեցումը քննում է մարդկանց ներհատուկ ամի ու զարգացման տեսնեցմները և ներհատուկ հոգեբանական կարիքները: Դրանք ինքնադրդման, անձի ինտեգրացիայի, ինչպես նաև դրական պրոցեսները առաջ մղող պայմանների հիմքում են:

Լեզվի ուսումնասիրում ներկա աշխատություններում դրդապատճառը դիսում են ինքնորոշման տեսանկյունից [13]: Ինքնուրույն մոտիվացիայի և արտաքին կարգավիրման միջև ֆունկցիոնալ և փորձված տարբերությունների պատճառով ինքնորոշման տեսության հիմնական խնդիրներից էր ներկայացնել ավելի տարբերակված մոտեցում դեպի դրդապատճառը՝ հստակեցնելով, թե ինչ տեսակի դրդապատճառ է դրսնորվում կոնկրետ տվյալ իրավիճակում:

Հաշվի առնելով մարդուն գործել ստիպու ուժերը՝ ինքնորոշման տեսությունը կարողացել է տարբերակել դրդապատճառների հստակ տեսակներ, որից յուրաքանչյուրը առանձնահատուկ հետևանքներ ունի՝ սովորելու, գործելու, անձնական փորձի և բա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

թեկնոգիան համար: Այս մոդելները ստեղծված չեն փոխարինելու ինտեգրատիվ-կիրառական դրդապատճառի հարացոյցը, այլ նախատեսված են նրան լրացնելու համար: Այն առավել հստակ է ներկայացրել ներքին և արտաքին դրդապատճառների միջև տարբերությունը:

Համաձայն ինքնորոշման տեսության, կա դրդապատճառի երկու հիմնական տեսակ՝ առաջինը հիմնված է ինքնին գործողության նկատմամբ ներքին հետաքրքրության, իսկ մյուսը՝ գովասանքի վրա, ինչը գործողության նկատմամբ արտաքին դիրք ունի: Դրդապատճառի այս տեսակները խիստ տարբեր չեն, բայց համարվում են ինքնորոշման շարունակության տարբեր եղբեր [14]:

Ներքին (ներհատուկ) դրդապատճառ (IM-Inner Motivation) եզրույթով նաև ենթադրվում է գործողության մեջ ներառվելու այնպիսի պատրաստականություն, որ հաճույք և գոհունակություն է տալիս սովորողին: Այսպես՝ լեզվահոգեբանների մի մասը վստահեցնում է, որ ներքին դրդապատճառը իմմնված է ինքնավստահ և վճռական լինելու անհրաժեշտության վրա [15]: Նրանք դա բացատրում են նրանով, որ, եթե մարդիկ ազատ են լինում որևէ գործողություն կատարելիս, նրանք ծգուում են հայտնվել հետաքրքիր իրավիճակներում, որտեղ կարող են աճել և ընդունել այն մարտահրավերները, որ տվյալ գործողությունն է ներկայացնում [16]: Եթե սովորողը ծգուում է ընդունել այս մարտահրավերները, նա ավելի ինքնավստահ է դառնում իր ընդունակությունների նկատմամբ:

Ոչ մի երևույթ չի արտացոլում մարդկային բնույթի դրական ներուժն այնպես, ինչպես ներքին դրդապատճառը. այն սահմանվում է որպես նորություն և մարտահրավեր վիճուրելու, ծավալել և զարգացնել սովորելու ունակություն, բացահայտելու ներքին հակում: Դիվելում մենատալիստենրը (զարգացման տեսության կողմնակիցները. անգլ. *to develop* նշ. զարգանալ, զարգացնել) ճանաչում են այն փաստը, որ երեխաները իրենց ծնված օրից ակտիվ են, հետաքրքրասեր, խաղալ սիրող՝ նույնիսկ գովասանքի բացակայության դեպքում [17]:

Ի պատասխան վերը նշված տեսակետի՝ քննարկման հանվեց այն փաստը, որ, չնայած մարդիկ ազատորեն օժտված են տարբեր տեսակի ներհատուկ դրդապատճառներով, պարզ է, որ ներքին հակման պահպանումը և ուժեղացումը պահանջում է նպաստավոր պայմաններ, քանի որ այն կարող է հեշտությամբ խաթարվել ոչ բարենպաստ պայմաններից [18]: Այսպիսով՝ ներքին դրդապատճառի մասին նրանց տեսությունը չի շոշափում ներքին դրդապատճառի առաջացման պատճառները, այլ այն քննում է այն պայմանները, որոնք առաջ են բերում և պահպանում կամ նվազեցնում են սովորելու ներքին ցանկությունն ու հակումը:

Այսպիսով ճանաչողական գնահատման տեսության (*Cognitive Evaluation Theory*) որպես ինքնորոշման տեսության ենթատեսություններ կայացնելուց հետո նոր լույս սփռվեց ներքին դրդապատճառ հասկացության վրա: Այսպես՝ այն նշում էր, որ սոցիալական միջավայրերը կարող են հեշտացնել կամ կանխարգելել ներքին դրդապատճառը՝ բավարարելով մարդկանց ներքին հոգեբանական կարիքները [19], [20]:

Այս ասեղ պետք է նշել, որ արտաքին դրդապատճառ եզրույթը իր հերթին վերաբերում է որևէ առանձին արդյունքի հասնելու համար մի որևէ գործողության կատարմանը, և այն հակասում է ներքին դրդապատճառին: Վերջինս, ինչպես արդեն նշվեց, վերաբերում է ներքին եւ-ը բավարարելու համար գործելու պատճառին:

Ի համեմատ ներքին դրդապատճառներով բացատրվող վարքի, արտաքին դրդապատճառները այն գործողություններն են, որ կատարվում են որևէ կոնկրետ արդյունքի հասնելու համար, ինչպես օրինակ՝ մրցանակի ստացումը կամ պատժից

ՄԵՍՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

խուսափումը: Այս տեսակի դրդապատճառը պարտադիր չէ, որ ենթադրի վարքի մեջ արտահայտվող ինքնավստահության պակաս:

Կան պահեր, երբ լեզու սովորելու համար բավական չէ ունենալ ներքին դրդապատճառ: Այդպիսի դեպքերում որպես խթանող ուժ հանդես է գալիս արտաքին դրդապատճառը: Այն կարելի է ներկայացնել որպես մի որևէ առանձին արդյունքի հասնելու համար առաջարտանքը հաջող կատարելու ուժեղ ցանկություն: Այն հաճախ ծագում է սեփական ցանկություններից այն կողմ առկա այնպիսի արտաքին երևույթներից, ինչպիսիք են բարձր գնահատականները, գովասանքները և ուսուցչի խրախուսանքը: Սովորողները տեսնում են, որ հաջողությունը պետք է խրախուսել, ուստի՝ նրանք սկսում են ակնկալիքներ ունենալ և անում են ամեն հնարավորը՝ դրանց հասնելու համար: Սակայն որոշ ուսումնասիրություններում երևան է հանվում այն փաստը, որ սովորողների հաջողությունը կախված է դրդապատճառի երկու տեսակից էլ, քանի որ այդ երկուսը փոխկապակցված են:

Չնայած սկզբանապես արտաքին և ներքին դրդապատճառները տարբեր են, կարելի է նույնականացնել իրավիճակներ, որոնցում արտաքին և ներքին արդյունքները կարող են փոխկապակցվել լեզու սովորելու պրոցեսը խթանելու համար [21]:

Ո. Զ. Վակերանը ստեղծել է ակադեմիկ դրդապատճառի սանդղակը՝ (*Academic Motivation Scale*) հիմնվելով ինքնորոշման տեսության վրա: Եվ այսպես սանդղակում առանձնացվում է ներքին դրդապատճառի երեք տեսակ [22]:

1. Իմանալու ներքին դրդապատճառ (Inner Motivation- Knowledge)
2. Ձեռքբերումների նկատմամբ ներքին դրդապատճառ (Inner Motivation- Accomplishment)
3. Փորձ ունենալու ներքին դրդապատճառ (Inner Motivation- Stimulation):

Գիտելիք ձեռք բերելու նկատմամբ դրդապատճառը (IM Knowledge) վերաբերում է գիտելիքներ և նոր գաղափարներ զարգացնելու ընթացքում առաջացող ուրախության և հաճույքի զգացումներ ունենալու համար կատարվող գործողություններին:

Ձեռքբերումների նկատմամբ ներքին դրդապատճառը (IM Accomplishment), սակայն, այն զգացումն է, որ կապված է նպատակին հասնելու կամ առաջարտանքի մեջ հմտանալու հետ:

Եվ, վերջապես, առաջ մղվելու և ինքնարաջայերվելու ներքին դրդապատճառը (IM Stimulation) վերաբերում է այն զգացմանը, որ հիմնված է առաջադրանք կատարալուց ստացվող հաճույքի և ոգևորության վրա [23]:

Տարբեր ժամանակներում և տարբեր տեսանկյուններից քննարկվել է օտար լեզու սովորելու մեջ ներքին դրդապատճառի կարևորությունը:

Տեսադաշտից դուրս չի մնացել ուսուցչի հաղորդակցման ոճի և սովորողի դրդապատճառի միջև կապը: Այսպես օրինակ՝ ապացուցվել է այն փաստը, որ ուսուցչի կերպարը և նյութը մատուցելու ոճը ազդում է սովորողի ինքնուրույնության վրա: Ինչքան ավելի շատ են ընկալում ուսուցչին որպես պահանջկուտ և վերահսկող, այնքան ավելի ցածր է սովորողների ներքին դրդապատճառը [24]: Եվ հակառակը՝ ինչքան ավելի շատ է ուսուցչը իր տեղին քաջալերումներով ընկալվում որպես սովորելու պրոցեսի մեջ ներգրավված անձ, այնքան ավելի ինքնուրույն և ինքնավստահ ծնով են սովորում օտար լեզուն: Բացահայտվել է նույնական այն փաստը, որ ներառական ուղղվածությունը սերտորեն կապված է ներքին դրդապատճառի և վերահսկման հետ:

Սակայն սա ամենակին չի նշանակում, որ ներքին և ներառական դրդապատճառները նույն են [25]:

ՄԵՍՐՈԴ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Եվ վերջապես սովորողների դրական արդյունքների վրա ներքին դրդապատճառի թողած ազդեցության ուսումնասիրությունն է ավելի է խթանում դրդապատճառի մասին կատարվող ուսումնասիրությունները:

Ընդհանրացնելով ներքին դրդապատճառների սահմանումները, դրանց ազդեցության վերլուծությունը, դրանք առաջացնող պայմանները պետք է ասել հետևյալը

1. Ուսանողի՝ հաջողության հասնելու ներքին և արտաքին դրդապատճառները և տրամադրվածության աստիճանը ակնհայտորեն ամենահզոր տարրերն են դրդապատճառի ամբողջական կառուցվածքում:

2. Ակգրնապես ներքին դրդապատճառ հասկացությունը ստեղծվել է և զարգացել որպես դրդապատճառի՝ մի կոնկրետ նպատակի ուղղված տեսությունների ալտերնատիվ, որոնք հիմնականում քննում են արտաքին պատիժների և խրախուսումների դերը: Բացի հետաքրքրասիրությունից և նորը բացահայտելու ցանկությունից, հետաքրքրությունը համարում են դրդապատճառի հիմնական բաղկացուցիչ մաս: Հենց ձամաշողական կառուցվածքերի վրա հիմքած խթանիչների դրական արձագանքները, որ պահում է սովորողների հետաքրքրասիրությունը [26]:

3. Ներքին դրդապատճառը սահմանվում է որպես ներքին դրդապատճառից ծագած գործողություններ: Այդպիսի գործողությունները կատարվում են ոչ թե գովասանքի կամ խրախուսանքի համար, այլև սովորողի ես-ի համար: Տվյալ դեպքում սովորողը շահագրգրված է լինում լավ սովորելու ոչ թե որևէ արտաքին երևոյթի, այլ իր սեփական ես-ի հետաքրքրության համար: Ուրեմն կարելի է ասել, որ ներքին դրդապատճառը սերում է հենց լեզուն ուսումնասիրելու պրոցեսից ստացվող հաճույքից: Ներքին դրդապատճառը ունեցող ուսանողները հաճույք են ստանում լեզու սովորելու առաջադրանքների և պրոցեսի մեջ ընդգրկված լինելու գործընթացից:

Անփոփելով հոդվածը՝ անհրաժեշտ է նշել, որ ներքին դրդապատճառը իշկապես համարվում է օտար լեզու սովորելու ամենակարևոր խթանող ուժը: Այն առաջ է մղում անհատին և ստիպում հաղթահարել սովորելու գործընթացում առաջացող բոլոր խոշընդուները: Անխուսափելիորեն զայխ ենք նաև այն եզրահանգնանը, որ ներքին դրդապատճառի ուժն էապես կախված է ուսուցիչ-սովորող փոխադարձ կապից և համագործակցությունից: Ներքին դրդապատճառը օտար լեզու սովորելու մեջ հաջողության հասնելու երաշխիք կարող է լինել միայն այն դեպքում, եթե ուսուցիչն հետևողական է իր աշխատանքում, իսկ սովորողը բարեխիղ է և հետաքրքրասեր:

ԾԱՆՈԳԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Gardner, R. C., & Lambert, W. E. (1972). Attitudes and Motivation in Second Language Learning. Rowley: MA: Newbury House, p. 109.
2. Gardner, R. C., Tremblay, P. E., & Masgoret, A. M. (1997). Towards a full model of second language learning: An empirical investigation. Modern Language Journal, pp. 80-81.
3. Cheng, H. F., & Dornyei, Z. (2007). The use of motivational strategies in language instruction: The case of EFL teaching in Taiwan. Innovation in Language Learning and Teaching, p. 153.
4. Gardner, R. C. (1985b). Social Psychology and Second Language Learning: The Role of Attitudes and Motivation. London: Edward Arnold, p. 344.

5. Crookes, G., & Schmidt, R. W. (1991). Motivation: Reopening the research agenda. *Language Learning*, p.469.
6. Dornyei, Z. (1990). Conceptualizing motivation in foreign language learning. *Language Learning*, p.45.
7. Cheng, H. F., & Dornyei, Z. նշված աշխ. էջ 174.
8. Gardner, R. C., & Lambert, W. E. (1972). Attitudes and Motivation in Second Language Learning. Rowley: MA: Newbury House, p. 109.
9. Dornyei, Z. (1994). Motivation and motivating in the foreign classroom. *Modern Language Journal*, p. 273.
10. Gardner, R. C., & Lambert, W. E. նշված աշխ. էջ 109.
11. Noels, K. A., Pelletier, L. G., Clement, R., & Vallerand, R. J. (2000). Why are you learning a second language? Motivational orientations and self-determination theory. *Language Learning*, pp.57-85.
12. Ryan, R. M. (1995). Psychological needs and the facilitation of integrative processes. In Ryan, R.M., & Deci, E. (2000). Self determination theory and the facilitation of intrinsic motivation, social development, and well being. *American Psychologist*, pp.68-78.
13. Ryan, R. M., նշված աշխ. էջ 70
14. Ryan, R. M., Kuhl, J., & Deci, E. L. (1997). Nature and autonomy: Organizational view of social and neurobiological aspects of self-regulation in behavior and development. In Ryan, R. M., & Deci, E. (2000). Self-determination theory and the facilitation of intrinsic motivation, social development, and well being. *American Psychologist*, p.73.
15. Ryan, R. M. (1995). Psychological needs and the facilitation of integrative processes. In Ryan, R.M., & Deci, E. (2000). Self determination theory and the facilitation of intrinsic motivation, social development, and well being. *American Psychologist*, p.77.
16. Ryan, R. M., նշված աշխ. էջ 78
17. Ryan, R. M. (1982). Control and information in the intrapersonal sphere: An extension of cognitive evaluative theory. In Ryan, R. M., & Deci, E. (2000). Self-determination theory and the facilitation of intrinsic motivation, social development, and well being. *American Psychologist*, p. 69.
18. Ryan, R. M., Kuhl, J., & Deci, E. L. նշված աշխ. էջ 68-78.
19. Deci, E. L., & Ryan, R.M. (1985). Intrinsic Motivation and Self Determination in Human Behavior. New York: Plenum Press, pp.325-346.
20. Cheng, H. F., & Dornyei, Z. նշված աշխ. էջ 68-78, 153-174.
21. Harmer, J (2001). The Practice of English Language Teaching. Third Edition England: Pearson Education, pp. 45-49.
22. Vallerand, R. J. (1997). Toward a hierarchical model of intrinsic and extrinsic motivation. In Zanna, M. P. (Ed.). *Advances in Experimental Social Psychology* (Vol. 29, pp. 271-360). San Diego, CA: Academic Press, pp. 70-89.
23. Carreira, J. M. (2005). New framework of intrinsic/extrinsic and integrative/instrumental motivation in second language acquisition. *The Keiai Journal of International Studies*, pp.45-47.
24. Noels, K. A., Clement, R., & Pelletier, L. G. (1999). Perceptions of teacher communicative style and students' intrinsic and extrinsic motivation. *Modern Language Learning Journal*, pp.23-34.
25. Noels, K. A. (2001a). Learning Spanish as a second language: Learners' orientations and perceptions of their teachers' communication style. *Language Learning*, pp.107-144.
26. Ellis, Rod (2008). *The Study of Second Language Acquisition*. Oxford, UK: Oxford University Press, pp. 28-31.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Ներքին դրդապատճառը՝ որպես օտար լեզվի ուսուցման կարևոր գործոն
Գայանե Գևորգյան**

Հոդվածում քննարկվում է ներքին դրդապատճառի դերը օտար լեզվի ուսուցման գործընթացում և նրա ազդեցությունը լեզվի յուրացման արագության և որակի վրա: Թվարկվում են տարբեր ժամանակներում առաջ քաշված մի քանի տեսություններ (ինքնորոշման տեսություն, ձանաչողական գնահատման տեսություն և այլ), որոնցում ավելի խորն է ուսումնափրկել ներքին դրդապատճառի կարևորությունը: Ընդգծվում է նաև այն փաստը, որ ներքին դրդապատճառի էֆեկտիվությունը կախված է սովորող-ուսուցիչ փոխհամագործակցությունից:

РЕЗЮМЕ

Внутренняя мотивация как важный фактор в обучении иностранному языку
Гаяне Геворгян

Ключевые слова: мотивация, фактор, межкультурная коммуникация, парадигма, самоуверенность, теория, контроль, шкала, взаимодействие учащегося и учителя

В статье рассматривается роль и влияние внутренней мотивации на скорость и процесс обучения иностранному языку. В частности отмечаются теории (теория самоопределения, теория познания и оценивания), которые глубже исследуют важность внутренней мотивации. В статье также подчеркивается тот факт, что эффективность внутренней мотивации зависит от взаимодействия учащегося и учителя.

SUMMARY

Inner Motivation as an Essential Factor in Teaching a Foreign Language
Gayane Gevorgyan

Keywords: motivation, factor, intercultural communication, paradigm, self-confidence, theory, control, scale, challenge, cooperation.

The article discusses the role of inner motivation in the process of foreign language teaching. It also studies the influence of the motivation on the speed and quality of foreign language acquisition. Different theories of different periods (Self-determination theory, Evaluation Cognitive theory etc.) are mentioned; they have enabled to have a deeper study of the mentioned factor. The article particularly underlines the fact that the effectiveness of the inner motivation depends on the teacher-learner cooperation.